# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«___»_________________ 201__թ. №_____________

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ

ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

*Ի պատասխան Ձեր 12.01.2018թ.*

*թիվ 323/6 հարցման*

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ամանորյա ծախսերի կապակցությամբ հայտնում եմ.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն Ամանորի շնորհավորական բացիկների համար գումար չի ծախսել, քանի որ նախորդ տարիներից եղել է բացիկների մնացորդ, որն օգտագործվել է ամանորյա շնորհավորական ուղերձների նպատակով.

2. ԱԻՆ աշխատողների արհեստակցական կազմակերպությունն Ամանորի տոնակատարությունների հետ կապված ԱԻՆ աշխատակիցների երեխաների համար ձեռք է բերել Ա. Խաչատրյան համերգասրահի ամանորյա ներկայացման 1801 տոմս՝ յուրաքանչյուրը 1000 ՀՀ դրամ արժողությամբ (տոմսերի ընդհանուր արժեքը՝ 1 801 000 ՀՀ դրամ).

3. ՀՀ ԱԻՆ աշխատակիցների համար ամանորյա հյուրասիրությունը և միջոցառումը կազմակերպել է ԱԻՆ ճաշարանը շահագործող «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն՝ սեփական նախաձեռնությամբ՝ իր միջոցներով:

Հարգանքով՝



ԳԱԳԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ
կապերի վարչություն
Լ.Ղազարյան, հեռ. 012317720

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 10) 31 77 28, Էլ.փոստ՝ mes@mes.am